ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

13 սեպտեմբերի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Գայանե Ալլահվերդյանը, Անահիտ Բադալյանը, Արթուր Դավթյանը, Անդրանիկ Թամազյանը, Արկադի Թամազյանը, Տելեմակ Աղվանյանը, Սենիկ Չերչինյանը, Արամ Ռամազյանը, Մանվել Ռամազյանը, Թագուհի Վարոսյանը, Աբել Տիտանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝ Շողիկ Քառյան, Սամվել Թորոսյան, Կարինե Սիմոնյան, Աստղիկ Ամիրբեկյան Արթուր Հովհաննիսյան , Արթուր Մանուկյան , Ալավերդի համայնքի վարչական տարածքների ղեկավարներ

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Ղումաշյանը

Նիստը արձանագրում էր ՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Հեղինե Ճիճիլյանը

Մինչ օրակարգային հարցերին անդրադառնալը համայնքի ղեկավարի առաջարկությամբ և ավագանու անդամների համաձայնությամբ օրակարգային հարցերին ավելացվեց ևս 5 հարց:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 10 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի հերթական թիվ 10 նիստի հետևյալ օրակարգը՝
   1 . 1 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2024 թվականի սեպտեմբերի 13-ի հերթական թիվ 10 նիստի օրակարգը հաստատելու մասին.

1.2 «Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունում չորրորդ խումբ բացելու մասին.

1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 125-Ա որոշման 7-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 22-րդ, 26-րդ, 31-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին.

1.4 Ոչ պիտանի գույքը դուրս գրելու մասին.

1.5 «Օձունի մշակույթի տուն» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունը լուծարելու և լուծարային հանձնաժողով ստեղծելու մասին.

1.6 «Օձուն համայնքի գրադարանային համակարգ» համայնքային ոչ առեվտրային կազմակերպությունը լուծարելու և լուծարային հանձնաժողով ստեղծելու մասին.

1.7 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-2 համակցված տարածական պլանավորման նախագիծը և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները հաստատելու մասին.

1.8 Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը օրենսդրության պահանջներին համապատասխան ուղղակի վաճառքով օտարելու մասին.

1.9 Օրինական ճանաչված կառույցը և համապատասխան հողամասը՝ տվյալ կառույցն իրականացրած անձին գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) օտարելու մասին.

1.10 «Այրումի լեռնագործ» փակ բաժնետիրական ընկերությանը պատկանող գույքը որպես նվիրատվություն ընդունելու մասին.

1.11 Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0038-0234 ծածկագրով, 0.0047 հա մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին.

1.12 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի սեփականություն հանդիսացող, կադաստրային 06-002-0061-0001 ծածկագրից առանձնացվող հողամասն օտարելու մասին.

1.13 ԳՄՀԸ կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու վերաբերյալ Ալավերդի համայնքի հայտը հաստատելու վերաբերյալ.

1.14 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի խոշորացված համայնքի տեղական երիտասարդական քաղաքականության հայեցակարգը հաստատելու մասին

1.15 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին՝

«ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՄՍՈՒՐ- ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՉՈՐՐՈՐԴ ԽՈՒՄԲ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասի» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մսուր- մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Սոնա Նալբանդյանի՝ 29 օգոստոսի 2024 թվականի թվականի թիվ 12 գրությունը և հաշվի առնելով մանկապարտեզ հաճախելու համար հերթագրված երեխաների թիվը՝ համայնքի ավագանին **որոշում է**.

1. Տալ համաձայնություն և թույլատրել 2024 թվականի սեպտեմբերի 16-ից «Ալավերդի համայնքի Ամալյա Կարապետյանի անվան թիվ 7 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում բացել 4-րդ խումբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100 - Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 125-Ա ՈՐՈՇՄԱՆ 7-ՐԴ, 11-ՐԴ, 12-ՐԴ, 13-ՐԴ, 14-ՐԴ, 22-ՐԴ, 26-ՐԴ, 31-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու՝ 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների 2024 թվականի աշխատակիցների

թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 125-Ա որոշման 7-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 22-րդ, 26-րդ, 31-րդ հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին՝

ՈՉ ՊԻՏԱՆԻ ԳՈՒՅՔԸ ԴՈՒՐՍ ԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Ալավերդի համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն Մարգարիտա Աբգարյանի զեկուցագիրը և համապատասխան հանձնաժողովի կողմից կազմված ակտը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «Ալավերդի համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի գույքացանկից և հաշվեկշռից դուրս գրել մաշված, օգտագործման համար ոչ պիտանի գույքը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին՝

«ՕՁՈՒՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Լուծարել «Օձունի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու՝ 2013 թվականի հունիսի 26-ի՝ « «Օձունի մշակույթի տուն» Համայնքային ոչ առևտրային կազմակերպության մասին» թիվ 23-Ա որոշումը:

3. Ստեղծել լուծարային հանձնաժողով՝ հետևյալ կազմով

3.1 Հարություն Ձավարյան - Ալավերդի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ

3.2 Դավիթ Սարգսյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ

3. 3 Արմինե Երիցյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ

3.4 Տիգրան Սարգսյան - «Օձունի գրադարանային համակարգ» ՀՈԱԿ-ի տնտեսվար, հանձնաժողովի անդամ

3.5 Հայկուշ Պետրոսյան - «Օձունի մշակույթի տուն» ՀՈԱԿ-ի գրադարանավար, հանձնաժողովի անդամ

3.6 Ամրաստան Ջանինյան - Օձուն վարչական տարածքի ղեկավար, հանձնաժողովի անդամ

3.7 Ռոմիկ Վարդանյան - Արևաձագ վարչական տարածքի ղեկավար, հանձնաժողովի անդամ

3.8 Ալլա Թարմինյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ

3.9 Հեղինե Ճիճիլյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի անդամ

3. 10 Սամվել Թորոսյան – Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետի պաշտոնակատար

3.11 Նարինե Թորոսյան- Ալավերդի համայնքի ավագանու անդամ

4. Լուծարային հանձնաժողովին՝ 2-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել կազմակերպության լուծարման գործընթացը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին՝

«ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 67-րդ, 68-րդ և 69-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 15-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Լուծարել «Օձուն համայնքի գրադարանային համակարգ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու՝ 14 հոկտեմբերի 2016 թվականի «ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» թիվ 41-Ա որոշումը:
3. Ստեղծել լուծարային հանձնաժողով՝ հետևյալ կազմով
   3.1 Հարություն Ձավարյան - Ալավերդի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ
   3. 2 Դավիթ Սարգսյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ
   3. 3 Արմինե Երիցյան - Ալավերդի համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ
   3.4 Տիգրան Սարգսյան - «Օձունի գրադարանային համակարգ» ՀՈԱԿ-ի տնտեսվար, հանձնաժողովի անդամ
   3.5 Ամրաստան Ջանինյան - Օձուն վարչական տարածքի ղեկավար, հանձնաժողովի անդամ
   3.6 Ռոմիկ Վարդանյան - Արևածագ վարչական տարածքի ղեկավար, հանձնաժողովի անդամ
   3.7 Յուրիկ Ավետյան - Ծաթեր վարչական տարածքի ղեկավար, հանձնաժողովի անդամ
   3.8 Ալլա Թարմինյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ
   3.9 Հեղինե Ճիճիլյան - Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար, հանձնաժողովի անդամ
   3. 10 Սամվել Թորոսյան – Ալավերդու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետի պաշտոնակատար
   3.11 Նարինե Թորոսյան- Ալավերդի համայնքի ավագանու անդամ
4. Լուծարային հանձնաժողովին՝ 2-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել կազմակերպության լուծարման գործընթացը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է 104-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԼՈՌԻ-2 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԵՎ ՆԱԽԱԳԾՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/***

Ղեկավարվելով 2002 թվականի մայիսի 7-ի «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՕ-337 օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 29-րդ ենթակետով, 1998 թվականի մայիսի 5-ի «Քաղաքաշինության մասին» ՀՕ-217 օրենքի 14. 3-րդ հոդվածի 23-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի օգոստոսի 12-ի N 2-15 եզրակացությունը՝ համայնքի ավագանին *որոշում է*.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի (Ալավերդի քաղաք, Ակներ, Աքորի, Ծաղկաշատ, Կաճաճկուտ, Հաղպատ, Ջիլիզա, Ախթալա քաղաք, Ախթալա գյուղ, Առողջարանին կից գյուղ, Բենդիկ, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց, Շամլուղ քաղաք, Փոքր Այրում, Օձուն, Ամոջ, Այգեհատ, Արդվի, Արևածագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Հագվի, Մղարթ, Շնող, Թեղուտ, Քարկոփ բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-2 համակցված տարածական պլանավորման նախագիծը և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է 105-Ա/

Լսեցին՝
ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ պարբերության 2) ենթակետով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 9-րդ ենթակետով, 3-րդ կետով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, հաշվի առնելով, որ փաստացի ավել օգտագործվող հողամասը համայնքի գլխավոր հատակագծով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը, հիմք ընդունելով Սուրեն Սիմոնի Պետրոսյանի դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, մատակարար կազմակերպությունների համաձայնությունը, որակավորում ունեցող չափագրող կազմակերպության՝ «Սարգիս

Թամազյան Ռոբերտի» Ա/Ձ-ի կողմից տրված մասնագիտական եզրակացությունները, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ալավերդի համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0023-0117 ծածկագրում գտնվող, բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.06 հա մակերեսով օրինական հողամասին կից ավել օգտագործվող 300քմ հողամասից Սուրեն Սիմոնի Պետրոսյանի կողմից փաստացի ավել զբաղեցված 0.0125 հա մակերեսով հողամասն օտարել փաստացի օգտագործողին՝ հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի չափով:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է 106-Ա/

Լսեցին՝

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ՝ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 12.06.2024թ. N 949-Ա, որոշումը, սեփականության իրավունքի N 26082024-06-0001 (գաղտնաբառ՝ NPGKHWQQZYBL) վկայականը, հաշվի առնելով, որ կառույցն իրականացրած անձի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 7-րդ փողոց, 29/2 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 12.06.2024թ. N 949-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 18.4 քմ

արտաքին մակերեսով բնակելի տան մասը սահմանված դրույքաչափին համապատասխան արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.0035 հա բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-088-0108-0035/ ուղղակի վաճառքով, կադաստրային արժեքով օտարել Ռոլանդ Հենրիկի Եսայանին:

2. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցն իրականացրած անձի հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է 107-Ա/

ԿՈՂՄ- 16 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

«ԱՅՐՈՒՄԻ ԼԵՌՆԱԳՈՐԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ կետով, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով «ԱՅՐՈՒՄԻ ԼԵՌՆԱԳՈՐԾ» բաց բաժնետիրական ընկերության գրությունը, սեփականության իրավունքի նոր վկայականի ձեռքբերման չափագրման տվյալները՝ **համայնքի ավագանին *որոշում է.***

1. Որպես նվիրատվություն ընդունել «Այրումի լեռնագործ» ԲԲԸ-ի կողմից ՀՀ Լոռու մարզի Ալավերդու համայնքին տրվող, Ալավերդի համայնք, Քարկոփ բնակավայր, փողոց 1, շենք 10 հասցեում գտնվող, «Այրումի լեռնագործ» բաց բաժնետիրական ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը և նրանով ծանրաբեռնված գույքը:
2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Լիազորել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ «Այրումի լեռնագործ» ԲԲ ընկերության հետ կնքել գույքի նվիրատվության մասին պայմանագիր և կատարել գույքի՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի անվամբ գրանցման աշխատանքներ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է 108-Ա/

ԿՈՂՄ- 16 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0038-0234

ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.0047 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ***/Զեկ.՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4) մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 612-րդ հոդվածով, 624-րդ հոդվածի 2-րդ կետով և 466-րդ հոդվածի 1-ին կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով Կարեն Սերգեյի Փարեմուզյանի դիմումը, վարձակալության իրավունքի N 11092024-06-0027 վկայականը, 02.02.2005թ. կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն լուծելու Կարեն Սերգեյի Փարեմուզյանին վարձակալության իրավունքով պատկանող՝ համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա 14 շենքի հարավ-արևմտյան մասում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0038-0234 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0047 հա մակերեսով հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքի պայմանագիրը:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա 14 շենքի հարավ-արևմտյան մասում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0038-0234 ծածկագրով, ավտոտնակով ծանրաբեռնված բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0047 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, 88252 /ութսունութ հազար երկու հարյուր հիսուներկու/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել ավտոտնակի սեփականատեր հանդիսացող՝ Կարեն Սերգեյի Փարեմուզյանին:
3. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ Կարեն Սերգեյի Փարեմուզյանի հետ կնքել հողամասի առք ու վաճառքի պայմանագիր:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն ընդունված է. /կցվում է 109-Ա/

ԿՈՂՄ- 16 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ 06-002-0061-0001 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Հողային օրենսգքրի 67-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով, Ալավերդի համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան և հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված հողամասի հատակագիծը, Ալավերդի համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող, համայնքի կադաստրային քարտեզի 06-002-0061-0001 ծածկագրից առանձնացվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0024 հեկտար մակերեսով հողամասը, բնակելի կառուցապատում իրականացնելու նպատակով, աճուրդով օտարելու համար տալ համաձայնություն:

   Աճուրդի մեկնարկային գին սահմանել 115 000 (մեկ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ, նախավճարի չափը մեկնարկային գնի 50 տոկոսի չափով և քայլի չափը՝ մեկնարկային գնի հինգ տոկոսը, մասնակցության վճար՝ տասնհինգ հազար (15000) ՀՀ դրամ:

2. Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապիցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեքներ կայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հողամասի օտարումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը:

4. Ալավերդի համայնքի ղեկավարին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել որոշմամբ սահմանված հողամասերի աճուրդը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումն չընդունվեց

ԿՈՂՄ- 1 ԴԵՄ -13 ՁԵՌՆՊԱՀ -2

Լսեցին՝

ԳՄՀԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԸՆԿԵՐ ՀԱՄԱՅՆՔ ԴԱՌՆԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ***/Զեկ.՝ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ/***

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դրույթները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի կարգավորումներով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Ալավերդի համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) կողմից իրականացվող «Ինտեգրված համայնքային զարգացում Հայաստանում» ծրագրի շրջանակներում գործընկեր համայնք դառնալու հայտերի ներկայացման հրավերին:
2. Համաձայնություն տալ համայնքի ընտրության դեպքում համայնքի տվյալ տարվա բյուջեից յուրաքանչյուր ծրագրի իրականացման համար հատկացնել 20% համաֆինանսավորում՝ համաձայն հայտերի ներկայացման հրավերի Բաժին 1-ի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է 110-Ա/

ԿՈՂՄ- 16 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի խոշորացված համայնքի տեղական երիտասարդական քաղաքականության հայեցակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունված է. /կցվում է 111-Ա/

ԿՈՂՄ- 16 ԴԵՄ -0 ՁԵՌՆՊԱՀ -0

Լսեցին՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի հոկտեմբերի 11-ը՝ ժամը՝ 16:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-16 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

Ավագանու անդամներ՝

ԱՐՏԱԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԵՆ ԴԱԼԼԱՔՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ԵՐԻՑՅԱՆ

ՍԻՄՈՆ ԶԱԽԱՐՈՎ

ՖԼՈՐԱ ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ

ՀՐԱՆՏ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՁԱՎԱՐՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՂՈՒԼՅԱՆ

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՄԿՐՏԻՉ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՍՄԲԱՏՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ԹՈՐՈՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊԱՊՈՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԹԱՄԱՋՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲԱԴԱԼՅԱՆ

ԹԱԳՈՒՀԻ ՎԱՐՈՍՅԱՆ

ԱԲԵԼ ՏԻՏԱՆՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ԱԼԼԱՀՎԵՐԴՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՌԱՄԱՋՅԱՆ

ՍԵՆԻԿ ՉԵՐՉԻՆՅԱՆ

ՏԵԼԵՄԱԿ ԱՂՎԱՆՅԱՆ
ԱՐԱՄ ՌԱՄԱՋՅԱՆ

Համայնքի ղեկավար՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆԸ

_____